Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	ՏՀՏ-ի կիրառման արդյունավետությունը 2-րդ դասարանում մայրենիի դասին
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Անի Հակոբյան Վահանի Դասվար 043-09-41-41 Anihakobyan499@gmail.com Մայրենի, Մաթեմատիկա, Ես և շրջակա աշխարհը, Տեխնոլոգիա I-IV դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	<<Էվրիկա>> Քաղաք Երևան, Ադոնցի 6/1 099-950440 eurekamyschooLinfo1@gmail.com

Բովանդակություն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
---------- 1
ՏԻՏՂՈՍԱԹՈՒՂԹ
----------1
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
----------2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
----------3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ
---------- 7
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԸ
---------- 5
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ,ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
----------12
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՑԱՆԿ ---------- 16
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ----------17

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման, նաև մարդկային ռեսուրսի պահպանման ու վերարտադրման նախապայմաններից: Անժխտելի է մի իրողություն, որ մարդկային գիտական մտքի թերևս մեծագույն հայտնագործությունն են տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները, որոնց կիրառումը մարդկային գործունեության տարաբնույթ ոլորտներում մեզ հանգեցնում է բազմաբնույթ և բազմազան հիմնախնդիրների լուծմանը: Ուստի այսօր մեր կրթահամակարգում ամենախիստ ձևով կարևորվում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում: Այսօր կրթության հիմնական հեռանկարային նպատակը մեր ապագա սերնդին կյանքի և գործունեության համար նախապատրաստելն է: Կրթական համակարգը կոչված է ձևավորելու այնպիսի անհատներ, որոնք ի վիճակի կլինեն կատարելագործել ու զարգացնել հասարակությունը: Համացանցի օգտագործումը զգալիորեն բարձրացնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման ու յուրացման արդյունավետությունը:

	ՏՀՏ-ների օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը: Նա դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր: Այժմ շատ կարևորվում և խրախուսվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում: Ուսումնական պլաններում ամիսը մեկ անգամ նախատեսված են տեխնոլոգիաների ներգրավմամբ դասեր բոլոր առարկաներից, հիմնականում դպրոցներն ունեն համակարգչային սենյակ, համացանց, ուսուցիչները ժամանակ առ ժամանակ անցնում են համակարգչային հմտությունների վերապատրաստում: ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում, աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: ՏՀՏ-ի օգտագործմամբ ցանկացած նյութի ուսուցում աշակերտներին նոր հնարավորություններ է տալիս մտածելու և մասնակցելու դասի նյութի ստեղծմանը, որն ուղեկցվում է առարկայի նկատմամբ նրանց հետաքրքրության զարգացմամբ:

	ՏՀՏ-ն կիրառելով մայրենիի դասաժամերին հակված է լուծելու մի շարք խնդիրներ, ինչպիսիք են սովորողի քննադատաբար և պատկերավոր մտածելու, երևակայություն դրսևորելու, ստեղծարարության, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքով իր մտածումները, անհանգստությունները ձևակերպելու և վերարտադրելու կարողությունը: Այսինքն՝ մայրենի առարկայի ուսումնասիրության հիմնական նպատակը բանավոր և գրավոր խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու ուսուցումն է: Այս աշխատանքի ընթացքում կպարզենք, թե ինչպե՞ս է ՏՀՏ-ի կիրառումը նպաստում մայրենիի արդյունավետ դասերի կազմակերպմանը երկրորդ դասարանում :
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիաներին. ● լեզվական գրագիտություն և կարողունակություն, ● սովորել սովորելու կարողունակություն, ● ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն ● թվային և մեդիա գրագիտություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը	<<Էվրիկա >> դպրոցի երկրորդ դասարանի 14 աշակերտ՝ 7 տղա, 7 աղջիկ:

/քանակ, սեռային բաշխում/	
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտությունը իրականացրել եմ դիտարկման, զրույցի և հարցաթերթերի մեթոդի մջոցով, որը հնարավորություն տվեց մանրամասնորեն բացահայտելու հետազոտության նպատակը: Դիտարկման մեթոդը հնարավորություն տվեց տեսնելու, թե որքանով է երեխաներին հետաքրքիր և արդյունավետ ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսին, և հատկապես մայրենիի դասին: Զրույցի մեթոդով, բացահայտեցինք երեխաների տեսակետը, դիրքորոշումը <<ընկեր >> գաղափարի շուրջ: Աշակերտները արտահայտեցին իրենց մտքերն ու կարծիքները, միասին վերհանեցինք, թե ով է իսկական ընկերը և ինչ հատկանիշներ պետք է ունենա, արդյո՞ք իրենք իսկական ընկեր են և ունեն իսկական ընկերներ: Աշակերտները պատմեցին նաև այնպիսի պատմություններ իրենց կյանքից, երբ իրենք կամ իրենց ընկերները տվյալ պարագայում եղել են իսկական ընկեր, պատմություններից մի քանիսը վերաբերում էր դպրոցական կյանքին, դիմացինին օգնելու, հոգ տանելու և պաշտպանելու մասին: Հարցաթերթի մեթոդով ամփոփել ենք մեր հետազոտական աշխատանքը, որի արդյունքում պարզ դարձավ թե որքանով է հնարավոր ՏՀՏ-ի գործածությամբ ստեղծել և օգտագործել ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ, որն էլ իր հերթին ապահովում է դասապրոցեսի արդյունավետությունը:

Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	15.08-15.09 2023

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	Ժամանակակից դպրոցը նման է մի մեծ լաբորատորիայի, որտեղ մանկավարժների և սովորողների ջանասեր աշխատանքը թույլ է տալիս ձեռք բերել անգնահատելի մի փորձ, որն էլ նպաստում է նոր չափանիշներին համապատասխան կրթական արդյունքների ապահովմանը, ձեռքբերմանը, գնահատմանը, կրթության, ինչպես նաև ուսուցիչների աշխատանքի որակի գնահատման չափանիշների համատեղ որոնմանը: Հանրակրթության պետական չափորոշչով յուրաքանչյուր ուսումնական բնագավառ կայացվում է կրթության բովանդակության հետևյալ բաղադրիչների միջոցով՝ գիտելիքների համակարգ, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ: Այսինքն՝ յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը զուգահեռ պետք է աշխատի այդ երեք ուղղություններով՝յուրաքանչյուրի համար դնելով համապատասխան նպատակներ: Ուսումնառությունը, որը զուրկ է որևէ հետաքրքրությունից և տրվում է միմիայն պարտադրանքով, սպանում է սովորողների մեջ սովորելու ձգտումը, իսկ այն ուսումնառությունը, որը հիմնված է առարկայի նկատմամբ հետաքրքրության վրա, տալիս է ցանկալի արդյունք: Սովորողը պետք է ներգրավված լինի դասապրոցեսին: Ներգրավվածությունը մեծացնելու համար տարբեր միջոցներ կան: Դրանցից մեկը ՏՀՏ-ի կիրառումն է դասապրոցեսի ընթացքում: Ժամանակակից աշակերտի առօրյայի անբաժանելի մասն են կազմում համակարգիչն ու համացանցը, և նրա կիրառությունը դասապրոցեսին ավելի արդյունավետ կդարձնի դասը:

Ակադեմիկոս Ա. Պ. Սեմյոնովին նշում է «ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում»: Այս պնդումը պետք է որոշիչ լինի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում: Այդ նպատակների իրականացման համար դասվարի աշխատանքային գործունեության մեջ ՏՀՏ միջոցների կիրառումը անհրաժեշտություն է դառնում:

ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսում

· Ուժեղացնում է սովորողների սովորելու մոտիվացիան:

· Հնարավորություն է տալիս օգտագործել ինֆորմացիա ուսումնական զանազան հարթակներից:

· Խնայում է ժամանակը:

· Հնարավորություն է տալիս դասի ընթացքը դարձնել ավելի հետաքրքիր ու բազմաբաղադրիչ:

· Ուսուցչին տալիս է տեխնոլոգիական մեծ պահուստ:

Ինչպես գիտենք, տարրական դպրոցում է, որ երեխայի առաջատար գործունեությունը խաղից վերածվում է ուսումնականի: Այսպիսի փոփոխությունը հեշտությամբ չի ընկալվում այն աշակերտների կողմից, որոնց մոտ պակասում է խաղային փորձը: Համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը ուսումնական գործընթացում պարզապես թույլ է տալիս համատեղել խաղային և կրթական գործողությունները: Սա ապահովում է գործունեության սահուն փոփոխություն, և ուսումը դառնում է ոչ ֆորմալ և հետաքրքիր: Էլեկտրոնային ուսուցողական նյութերի համակարգված օգտագործումը ոչ միայն նպաստում է տարրական դասարանների աշակերտների տեղեկատվական կարողությունների զարգացմանը, այլ նաև թույլ է տալիս լուծել մի շարք հոգեբանական

	և մանկավարժական խնդիրներ: Տարրական դպրոցում անհնար է դասն անցկացնել առանց դիդակտիկայի: Նախկինում դրանք տարբեր պաստառներ էին, նկարներ, նկարազարդումներ և այլն: Ներկայումս դիդակտիկան ապահովում է համակարգիչը: Համակարգչի հարուստ գրաֆիկական, ձայնային, ինտերակտիվ հնարավորությունների օգտագործումը դասարանում բարենպաստ ֆոն է ստեղծում՝ նպաստելով աշակերտների զարգացմանը, կարծես աննկատելի և խաղային մեթոդով: Կարծում եմ, որ դպրոցականների ուսուցման և դաստիարակության արդյունքներից մեկը պետք է լինի երեխաների պատրաստակամությունը տիրապետելու ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներին և հետագա ինքնակրթության համար համակարգչի միջոցով ստացված տեղեկատվությունը արդյունահանելու և մշակելու ունակությանը:
Հետազոտության ընթացքը	Հետազոտության ամենասկզբում Menti.com հարթակի միջոցով, մտագրոհի մեթոդով վերհանեցինf <<ընկեր >> բառի բացատրությունը և աշակերտների պատկերացումները ընկերության մասին: Այնուհետև աշակերտները դիտեցին <<Ո՞վ է ընկերդ>> հայկական մուլտֆիլմը, որից հետո քննարկեցինք այն, դիտարկելով ի՞նչ հատկանիշներ պետք է ունենա իսկական ընկերը: Արտահայտման ռուբրիկի միջոցով գնահատել եմ երեխաների բանավոր խոսքը՝ հետագայում վերլուծություն իրականացնելու նպատակով: Այնուհետև անդրադարձանք մեր դասանյութին,

երեխաները շարունակաբար ընթերցեցին <<Ընկերները>> բնագիրը: Միասին վերհանեցինք թե ինչպե՞ս հերոսի ընկերը փորձեց օգնել նրան, խաղի միջոցով բացատրելով, որ նա սիրում է և գրել, և կարդալ: Բնագրի արժեքային համակարգը ընկալելու նպատակով նկարագրվել են հերոսները, նրանց քայլերի տրամաբանությունը՝ ճիշտ կամ սխալ լինելը, դրանց պատճառներն ու հետևանքները: Ուսուցչի հրահանգով շարունակեցին պատմությունը՝ հորինելով այլ ավարտ: Կատարվել է տեքստի հետ աշխատանք մեթոդական շղթայով՝ տեքստի ողջ բառապաշարը յուրացնելու, տեքստը ամբողջությամբ ընկալելու նպատակով: Այնուհետև տեսասահիկի միջոցով երեխաները դիտեցին առածներ ընկերության մասին և նշեցին, թե որն է իրենց ամենից շատ դուր եկած առածը: Տեսասահիկում ներկայացրեցինք դասագրքի առաջադրանք 8–ը, որտեղ առածի բառերը խառնվել էին և երեխաները պետք է վերականգնեին առածը և կարդային: Այստեղ երեխաները կարողացան շատ արագ կողմնորոշվել և նկարների միջոցով ճիշտ վերականգնեցին առածները:

Երեխաներին հանձնարարվեց գրատախտակին փակցված նկարներից ընտրեն այն նկարները, որոնք ենթադրում են, որ իսկական ընկերներ են: Յուրաքանչյուր աշակերտ մեկնաբանեց իր ընտրությունը: Տվյալ դասանյութը պարունակում էր նաև աշխատանք լեզվական գիտելիքի շուրջ, ուստիև սկսեցինք կատարել առաջադրանքը, որի պահանջն էր կարդալ <<Ե-ի երգը >> և դիտել տեսահոլովակը, որի հիմնական միտքը ուշադրություն դարձնելն էր, թե

ինչպես է հնչում ե-ն: QR կոդի միջոցով, մենք կարողացանք դիտել տեսահոլովակը (ուսումնական տարվա առաջին օրերին բացատրել եմ աշակերտներին QR կոդի նշանակությունը, ցույց եմ տվել թե ինչպես է այն հնարավոր <<կենդանացնել >>): Կարևոր է արձանագրել, որ աշակերտները մեծ ոգևորությամբ էին նախապատրաստվում նմանատիպ աշխատանքերին և սիրով կատարում: Հարցերի միջոցով աշակերտները վերհիշեցին ե երկհնչյուն-տառի կիրառման կանոնները , քանի որ դա դեռևս առաջին դասարանում սովորել են : Լեզվական գիտելիքի շուրջ կատարեցինք խմբային աշխատանք, տեսասահիկի վրա հայտնվեց ե-ի, է-ի կիրառման կանոնները և վերհիշելուց հետո ձևավորեցինք երկու խումբ, որոնց երեխաների ցանկությամբ անվանեցինք Երևան և Էրեբունի: Խմբերին հանձնարարվեց սահմանված ժամանակում գրել ե-ով և է-ով սկսվող բառեր, յուրաքանչյուր խումբ ուներ մեկ համակարգիչ, բայց պարտադիր պայման էր, որ խմբի բոլոր մասնակիցները պետք է գրեին: Օգտվելով Answer garden հարթակից երկու խմբերի մասնակիցները գրեցին, այնպիսի բառեր, որտեղ լսվում է **յէ**, բայց գրվում է **ե** տառը(ելակ, Երևան, ելնել, Եվա, երկար, երազ, երկու, երիցուկ, երակ, երեք, եզր): Իսկ մյուս խմբի հանձնարարությունն էր գրել է-ով սկսվող բառեր(էջ, էկրան, էջ, Էրեբունի, էլեկտրակայան, էմին): Քանի որ երկու խմբի էին բաժանվել, արդյունքում ստացվեց խաղ-մրցույթ, որի ժամանակ հաղթեց Երևան թիմը, որը առավել շատ բառեր էր գրել: Նկատելի էր այն հանգամանքը, որ համեմատաբար, պասիվ աշակերտները մեծ ոգևորությամբ և ուրախությամբ էին

	մասնակցում աշխատանքին: Դասաժամի ավարտից հետո աշակերտներից մի քանիսը տպավորված լինելով Ե-ի երգով, դասամիջոցին նույնպես երգում էին:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Ստուգելու համար, թե աշակերտների մոտ ինչ մոտիվացիա է առաջացել , կազմել եմ հարցաթերթ, որը լրացրել են սովորողները: ՏՀՏ-ների կիրառմամբ դասերը անցկացնելուց հետո աշակերտները լրացրել են հարցաթերթ՝ ՏՀՏ-ների կիրառմամբ դասերի վերաբերյալ: Հարցաթերթը լրացրել են 14 աշակերտներ: Հարցվողներից 14-ը նշել են, որ հետաքրքիր է դասը, մնացած դասերից տարբերվում է , պատկերավոր է և հետաքրքիր, լավ է հասկանում դասը: Այն հարցին , թե ավելի ուշադիր են դասին, 14 աշակերտներից 12-ը պատասխանել են ՝ այո, 1-ը՝ ոչ այդքան, 1-ը՝ ոչ: Մյուս հարցին, թե ցանկանում են, որ բոլոր դասերը ՏՀՏ-ների կիրառմամբ լինեն, 14 աշակերտներն էլ պատասխանել են ՝ այո: Հարցվող աշակերտները գրել են , որ լավ է տպավորվել խաղ-վարժությունները և կցանկանային այդպիսի խաղ-վարժություններ շատ լինեն: Ելնելով հետազոտության արդյունքներից՝ պետք է նշեմ, որ ՏՀՏ-ի կիրառումը մայրենիի դասերին կրելու է շարունակական բնույթ՝

սահմանելով հետեւյալ նպատակները՝

- Մեծացնել աշակերտների ակտիվությունը
- զարգացնել բառապաշարը
- ուղղագրությունն ու ուղղախոսությունը
- կապակցված խոսքը
- քննական մտածողությունը:

Ինչպես նաեւ հիմք դառնալ վերառարկայական կարողունակությունների ձեւավորմանը՝

•լեզվական գրագիտություն եւ կարողունակություն,

• սովորել սովորելու կարողունակություն,

• ինքնաճանաչողական եւ սոցիալական կարողունակություն

•մեդիագրագիտության կարողաունակություն:

Այստեղից էլ եզրակացնում ենք, որ ցանկացած առարկա կարելի է ինտեգրել ինֆորմատիկայի հետ: ՏՀՏ-ի կիրառումը ուսումնական գործընթացում նորարարական տեխնոլոգիաների ամենավառ օրինակն է, ըստ որի յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն որոնում է նոր տեղեկատվության աղբյուրներ՝ խթանելով պատասխանատվությունն ու անկախությունը: ՏՀՏ-ն հաջողությամբ ինտեգրվում է այլ ոլորտներին՝ նպաստելով նյութի խորը և համակողմանի տիրապետմանը: Երեխաներին գրավում է ինտերակտիվ գրատախտակը կամ մոնիտորի էկրանը, որոնցից ոգևորված

	աշակերտներն ավելի ակտիվորեն են սովորում իրենց տեսած նյութը: Համակարգչային ծրագրերը թույլ են տալիս նախագծել ուսման իրավիճակները, ապահովելով անհատական մոտեցում յուրաքանչյուր աշակերտի:
Այլ տեղեկատվություն	


16
14
12
10
8
6
4
2
0

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ. Զ. Հակոբյան, Գ. Ռ. Պետրոսյան, Վ. Ա. Մանուկյան տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումն ուսուցման գործընթացում 2012թ

2.Թոփուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ.Հ., Պողոսյան Լ.Մ, Ասատրյան Ս.Մ., Անտոնյան Լ.Ա., Ղազարյան Մ.Զ., Տեղեկատվական տեխնոլոգիաները դպրոցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018:

3.Անահիտ Չոմարյան <<Տիկնիկային ներկայացումները
որպես բանավոր խոսքի զարգացման
միջոց կրտսեր դպրոցում>>

3.Зайцева С.А., Иванов В.В. Современные информационные технологии в образовании [Электронный ресурс]

4.Кузнецов Е.В. Использование новых информационных технологий в учебном процессе / Е.В. Кузнецов. – М., 2003 1. Информационные комуникационные технологии в образовании, ЮНЕСКО, 20135.

https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-26/e5b2a491ee7e890c5c02f4fd2b87333c.pdf

https://lib.armedu.am/files/resource/files/2022-10-26/e5b2a491ee7e890c5c02f4fd2b87333c.pdf

[1]Հավելվածներ

[1]

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ